1552

891.715
П-28
924

ԳԱՏԱԼԻ ՇԵՐՈՍ



19 ԳԵՏՏՐԱՏ-ՄՈՍԿՎԱ 24

Ա/480

Н А Р М.
4-306а

Р. П. Б.
1924

№ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 4

ա՛ֆ-ս

891.715
Պ-28

3572

ՊԱՏԱՆԻ ՀԵՐՈՍ

Ռուսերենից թարգմանեց ԱՄԵՌ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 140
ՄՈՍԿՎԱ 1924



Կ 50456 - Պ.հ.

ՀՍՍՌ-Այս.ՍՍՌ

Ա 1506-63
29972-63

Главлит № 29084 Тираж 3000

Типография Госиздата ССР Армении. Москва, Армянский пер. № 2



ՊԱՏԱՆԻ ՀԵՐՈՍ

Ինչը տարեկան Կարլը այսոր մենակ է իրենց բնակարանում։

Հայրը արդեն յերկու շաբաթ է, վոր չկա։ Բայց Կարլը չի զարմանում դրա համար։ Նա գիտե, վոր վոստիկանները փնտռում են հորը, և ուրեմն լա՛վ է, վոր տանը չի։

Կարլի հայրը կոմունիստ է։ Ահա՛ թե ինչու փնտռում են նրան։ Յեվ ովքե՞ր։ Կարլը քմծիծաղեց ինքն իրեն։ Տիմար վոստիկանե՞րը, վորոնք մինչեվ անգամ չեն իմանում, թե ինչ բան է կոմունիստ լինել։

Իսկ Կարլը գիտե։ Լա՛վ գիտե։ Յերեկոները, յերբ Կարլը իջնում է հոր ծնկերից՝ նա ամբողջովին հմայված է լինում նրա սքանչելի պատմություններով։

Ա՛հ, կոմունիզմի որոք ինչքա՞ն լավ կլինի ամենքի համար։

Կոմունիստները ցանկանում են, վոր բոլո՛ր մարդիկ աշխատեն, և բոլորը միատեսակ լավ ապրեն։

Կարլի մտքերը թռչո՛ւմ են մի ուրիշ բանի վրա։ Ա՛յ, դպրոցական ընկերները նույնպես չեն հասկանում, ինչ բան է լինել կո-

մունիստ։ Առայժմ նա՝ Կարլը, միակ կոմունիստն է իր դասարանում։

Դեռ յերեկ ուզում եյին նրան դնքսել։ Բայց նա ճանկ չընկավ։ Նա այդպիսին չէ։ Քաշեց իր կաշվե գոտին, վոտով կապտում է գրքերը, կանգնեց պատի մոտ ու սկսեց թափահարել դես ու դեն։ Վոչ վոք սիրտ չարեց նրան մոտենալ։ Մինչև անգամ յերկուսը անցան նրա կողմ։ Հիմա նրանք յերկուս են և մեկ—ուրեմն՝ յերեք։ Իսկ յերեքը՝ դա արդեն իսկական միություն է։

Կարլը վոտքի ճամբեր չտեց։ Բայց չէ, դա մայրիկը չի։ Կարլը միշտ ճանաչում է մոր վոտնաձայնը։ Սանդուխով բարձնանում են մի քանի մարդիկ։ Այդ ո՞վ կարող է լինել։

Բացվում է դուռը, և մտնում են յերեքը։ Կարլը չի ճանա-

Քաշեց իր կաշվե գոտին...ու սկսեց թափահարել դես ու դեն.

Բացվում է դուռը յեվ մտնում են յերեքը.

չում Նրանց։ Նա, ով առաջինը ներս մտավ՝ անագին բեխերով, բարձրահասակ մարդ՝ շոյալիր ժպիտով հարցրեց.

—Տղա՛, դու մենա՞կ ես այստեղ,

Կարլը գլխով արեց։

— Իսկ վորտե՞ղ է մայրդ.

— Գնաց գնումներ անի.

— Իսկ ու՞ր է հայրդ.

Կարլը զգուշացավ։ Ո՛, նա չի ասի վորտեղ է հայրը։

— Հայրիկը մեկնել է—իսկույն սարքեց նա.

— Ու՞ր.

Կարլը պատասխանեց, վոր չգիտե։ Բարձրահասակ մարդը պնդում եր իր հարցի վրա։ Նա պահանջում եր, վոր տղան ասի՝ վորտեղ է հայրը։

— Չե՛, չե՛։ Ցես չգիտեմ։

Բարձրահասակ մարդը բարկությամբ շփում եր բեխերը։

— Իսկ յեթե յես քեզ բա՛նտը տանեմ—ասաց նա սպառնալի։

Կարլի սիրտը վեր թռավ։ Բայց նա վոչինչ չասաց. նա չգիտե՛, չգիտե՛...

Կարլին ներքեվ տարան, դուրս բերին փողոց և նստեցրին ոթո-

Կարլին ներքեվ տարան.

Կարլին նստեցրին ոթոմոբիլ.

մոբիլ։ Նա քիչ վախենում եր իրենից, բայց ոթոմոբիլով գնալն ել, այսպես թե այնպես՝ լա՛վ է։

Ոթոմոբիլով գնալը, այսպես թե այնպես՝ լա՛վ է.

Կես ժամ անց, նա գտնվում եր մի մեծ, իր հասկացողությամբ հիանալի սենյակում, և մի քանի բոպե աչքերը ճմլում եր պայծառ



Կարլը գտնվում եր մի մեծ սեյակում.

լույսից։

Կարլին ծիծաղելի յեր թվում, թե ինչպես կարող են այսպիսի սենյակներ լինել՝ արտաքուստ այդ սոսկալի ու տգեղ շինության մեջ, վորը տեսավ նա, յերբ նրանք մոտենում եյին։

Նրա դիմաց, թղթերով կուտակված գրասեղանի առաջ, նստած եր վոսկեթել, վոստիկանական տարազով հագնված մի մարդ։ Կարլը, վոր դիտում եր սենյակը՝ դժվարությամբ շուռ յեկավ դեպի նա, յերբ այդ մարդը ինչ վոր բան հարցրեց։ Ցեվ յերբ շուռ յեկավ՝ մտաբերեց.

«Ամեն ինչ կասեմ, միայն թե՝ վո՛չ հորս մասին»։

— Քանի՞ տարեկան ես, անունդ ի՞նչ է, դպրոց գնու՞մ ես, հասցեդ՞ վ։

Կարլը պատասխանեց։

— Իսկ ուտել՝ ուզու՞մ ես։

Հա՛, հա՛, նա ուզու՛մ է, չե՞ վոր ճաշից անցել է բավական ժամանակ։

Մարդը ինչ վոր հրաման տվեց զանգի ձայնի վրա ներս յեկող վոստիկանին։ Ցերկու, յերեք բոպեյից հետո Կարլը ախորժակով խփշտում եր հացն ու յերշիկը։

Կարլի խոսակիցը պարգեց նրան մի բաժակ շոկոլատ.



Պատանի կոմունիստը չի՛ կարող լինել իր հոր դավաճանը։

Ուտելու ժամանակ Կարլը շատ խոսեց իր զրուցակցի հետ։ Ինչո՞ւ չէ, նա մինչև անգամ շատ սիրալիր մարդ է։

Կարլը մեկնվեց բազկաթոռի վրա, նա լիովին կշտացել էր, բայց սիրալիր զրուցակիցը պարզեց նրան մի բաժակ շոկոլատ։

Կարլը չմերժեց։

Բայց բաժակը պարզելիս, մարդը հանկարծ, արագ ու հանգիստ հարցրեց։

— Իսկ վորտե՞ղ է քո հայրը։

Կարլը քար կտրվեց։

— Վորտե՞ղ է հայրդ։

Լռություն։

— Հայրդ վորտե՞ղ է՝ հարցնում եմ յես։

Կարլի շունչը կտրվեց, նա դողում էր, բայց չե՛ր վախենում։ Թո՛ղ բղավի ինչքան ուզում է։

— Հ՞ը, ասելո՞ւ յես, թե չէ։

Կարլը առաջ քայլեց։

Պատանի կոմունիստը չի՛ կարող լինել իր հոր դավաճանը։

Անցավ մի բոպե — յերկու...

Հասակավոր մարդն ու տղան, կանգնած եյին իրար դիմաց, և անադին սենյակում հանգիստ էր, տիրում էր ինչ վոր հանգստություն, միայն պատի ժամացույցը անդադար կտրում էր վայրկյանները։

— Թա՛կ-թա՛կ-թա՛կ...

Ներս մտավ մի մարդ։

— Ձեզ պահանջո՛ւմ են։

Հմայիչ դրությունը խանգարված էր։ Մարդը պինդ հայհոյեց և ծանր քայլերով դուրս յեկավ սենյակից։

Կարլը ընկավ բազկաթոռի վրա։ Նա դողում էր հուզմունքից, ուզում էր լաց լինի, բայց չե՛, նա իրեն թույլ չի՛ տա հեկեկալ։

Անցավ մի քանի բոպե։ Վոչ վոք չէր անցնում. Կարլը մենակությունից սոսկաց։ Նա դուրս թռավ բազկաթոռից, վազեց դեպի դուռը, և թիկացրեց։

Ո՛, զարմանալի բան. դուռը բացվեց։ Մի խիզախ միտք ծագեց նրա մեջ։ Դռնիցը դուրս մտիկ տվեց՝ վոչ վոք չկար։ Մի վայրկյան, — և նա թռչում էր սանդուխներից։ Նա վերջին դռան մոտ էր։ Կանգնած եյին զինվորները։ Կարլը բացեց դուռը և դուրս յեկավ։

Կարլը թռչում էր սանտուխներից.

Զինվորները նրա վրա ուշադրություն չդարձրին։ Տղի սիրտը ուզում էր՝ պայթի։ Բայց նա վազում էր, վազում, վազում...

Նա վազում էր, վազում, վազում...

— Մայրիկ...

Կարլը մոտ վազեց մորը.

Կարլը մոտ վազեց մորը։ Շփոթված, խառնիխուռ, մեջեմեջ լալով, նա պատմում էր մորը այն բոլորը, ինչ վոր պատահել էր։

Կես ժամից հետո, Կարլը անկողնումն էր, արդեն քնելու վրա յեր, բայց հանկարծ վեր թռավ, և քնաթաթախ ձայնով հարցրեց։

— Ճիշտ ե, չե՞ մա՛յրիկ, կոմունիստները յերբե՛ք, յերբե՛ք չեն կարող լինել դավաճաններ։

Ցեվ չսպասելով պատասխանի, համոզված, վոր այլ կերպ էլ չի՛ կարող լինել՝ խորը քուն մտավ։

ՀՍՍՌ-ԱՍՍՀ

Կլիշեները տրամադրել և Գ. ՄԻՐԻՄԱՆՑԱՆԻ
Հրատարակչությունը
Շապիկը՝ Գ. ՔՈՉԱՐԻ

ԳԻՆԸ 20 ԿՈՊԵԿ

4322
Н АРТ
4-3
D
1552
000570
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0005705

4-306a